«Հաստատում եմ»
«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան»
հիմնադրամի ռեկտոր,
տեխն. գ. դ. պրոֆեսոր _____ Ռ. Ռ. Սահակյան

«22» 06 2022 թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Նարինե Ռաֆիկի Մատինյանի «Ուսուցչի մասնագիտական ռեֆլեքսիվ հմտությունների զարգացման ուղիները շարունակական կրթության համատեքստում» խորագրով ԺԳ 00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Նարինե Ռաֆիկի Մատինյանի «Ուսուցչի մասնագիտական ռեֆլեքսիվ հմտությունների զարգացման ուղիները շարունակական կրթության համատեքստում» թեմայով ատենախոսությունը և սեղմագիրը քննարկվել են Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի «Մանկավարժության և հոգեբանության» ամբիոնի նիստում (Արձ. թիվ 19, կայացած՝ 21.06.2022թ.):

Մասնակցում էին Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ, մ.գ.թ. դոցենտ Լ. Բաղդասարյանը, ամբիոնի աշխատակիցներ՝ մ.գ.դ. պրոֆեսոր Պ. Գևորգյանը, հ. գ. թ. դոցենտներ՝ Հ. Ավագիմյանը, Վ. Միրզոյանը, Մ. Մազմանյանը, Մ. Շահվերդյանը, Ա. Ղազարոսյանը, մ.գ.թ. դոցենտներ՝ Ս. Բեժանյանը, Ա. Հարությունյանը, Ք. Վիրաբյանը, ասիստենտներ՝ մ.գ.թ. Ն. Ներկարարյանը, Լ. Մարուքյանը, հ.գ.թ. ասիստենտ Վ. Եղիազարյանը, դասախոսներ՝ Տ. Մալումյանը, Լ. Դանիելյանը, Ա. Խաչատրյանը:

Մանկավարժական ռեֆլեքսիան, որպես հոգեբանամանկավարժական երևույթ, մասնագիտական վարպետության յուրահատուկ ցուցանիշ և չափանիշ է, այն համարվում է մասնագիտական կարողունակության կարևոր բաղադրիչ, ինչը համակողմանիորեն հիմնավորել է հեղինակը:

Ներածության մեջ հեղինակը հստակ սահմանել է հետազոտության նպատակը և խնդիրները, օբյեկտն ու առարկան, մեթոդաբանական հիմքերը, վարկածը,

տեսագործնական նշանակությունը և պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

Ատենախոսության **«Ուսուցչի ռեֆլեքսիվ կոմպետենցիայի ձևավորման և զարգացման առանձնահատկությունները»** խորագրով առաջին գլխում.

1. Սահմանվել են «ռեֆլեքսիա», «ռեֆլեքսիվ կոմպետենտություն» հասկացությունները, գործառույթները: Նշվել է, որ մանկավարժի ռեֆլեքսիվ կոմպետենտությունը ենթադրում է ռեֆլեքսիայի մասին որոշակի գիտելիքներ և կիրառման ունակություններ: Ընդգծել է, որ մանկավարժական կամ մասնագիտական ռեֆլեքսիայի ձևավորման և զարգացման հիմնախնդիրը ՀՀ կրթական տարածքում անհրաժեշտ մակարդակով չի լուծվում:
2. Ներկայացվել են մանկավարժական ռեֆլեքսիայի կառուցվածքային և գործառական բնութագրերը: Քննվել են մասնագիտական մանկավարժական ռեֆլեքսիայի ձևավորման մանկավարժական պայմանները: Առանձնացվել են ռեֆլեքսիայի նախագծային, կազմակերպչական, հաղորդակցական, իմաստաստեղծ, դրդապատճառային, շտկող գործառույթները:
3. Վերլուծվել են մանկավարժական ռեֆլեքսիայի հիմնական գործառույթները և բաղադրիչները: Առանձնացվել և վերլուծվել է Մեզիրովի ռեֆլեքսիայի ենթատեքստային-իրադրային մոդելը: Նշվել է, որ մանկավարժական ռեֆլեքսիան կատարում է ախտորոշիչ, նախագծային, կազմակերպչական, հաղորդակցական, իմաստաստեղծ, իմաստաստեղծարար, դրդապատճառային գործառույթներ:

Ատենախոսության **«Ուսուցչի մասնագիտական ռեֆլեքսիվ հմտությունների զարգացման մոդելը»** խորագրով երկրորդ գլխում.

1. Սահմանվել է «հաղորդակցման ռեֆլեքսիա» հասկացությունը, ներկայացվել են ուսուցչի հաղորդակցման ռեֆլեքսիայի բովանդակային բնութագրերը, մակարդակները: Վերլուծվել է «հաղորդակցման ռեֆլեքսիա» հասկացությունը ըստ ճանաչողական, դրդապատճառային, արժեքային, վարքագծային ոլորտների:
2. Քննության են առնվել ռեֆլեքսիվ կոմպետենցիայի զարգացման մոդելները: Վերլուծվել են Ջ. Դյուիի փորձի վրա հիմնված ռեֆլեքսիվ

մտածողության զարգացման տեսությունը, Ս.Դ. Բրուկֆիլդի քննադատական ռեֆլեքսիայի, Մ. Էկերբերգի, Տ. Ղայի, Ս. Լիլիմենի քննադատական պրակտիկայի, Կ. Ջ. Ջեյի և Լ. Կ. Ջոնսոնի ռեֆլեքսիվ պրակտիկայի տիպաբանության, Ջ. Մունի ուսումնառության և մասնագիտական զարգացման ռեֆլեքսիայի մոդելները: Նշված և այլ մոդելների վերլուծության արդյունքում առաջարկվել է ուսուցչի ռեֆլեքսիվ կոմպետենցիայի ձևավորման և զարգացման քառաստիճան մոդելը, որի հիմնական բաղադրիչներն են ռեֆլեքսիվ միջավայրը, ռեֆլեքսիվ կոմպետենտության ձևավորվածության մակարդակի որոշման մեթոդիկաները, ուսուցչի վերապատրաստման անձնակենտրոն-ֆասիլիտացիոն և ամփոփիչ գնահատման-ինքնագնահատման տեխնոլոգիաները:

3. Սահմանվել են «ռեֆլեքսիվ միջավայր», «մանկավարժական պայմաններ» հասկացությունները: Նշվել է, որ ռեֆլեքսիան առկա է ուսումնական գործունեության գրեթե բոլոր ձևերում՝ նախագծային, կանխատեսող, էվրիստիկ, որոնողական, ստեղծագործական և այլն: Ռեֆլեքսիվ միջավայրը ոչ միայն ապահովում է սովորողների համապատասխան գործունեությունը, այլև նպաստում է նրանց մոտ ինքնագործունեություն ծավալելու կարողությունների ձևավորմանը: Եզրահանգել է, որ փոխներգործուն մեթոդներով աշխատելու նախապայմաններից մեկը հաղորդակցման ռեֆլեքսիայի շարունակական զարգացումն է:

Ատենախոսության **«Ուսուցչի ռեֆլեքսիվ կոմպետենցիայի ձևավորման և զարգացման մոդելի արդյունավետության փորձարարական հիմնավորումը»** խորագրով երրորդ գլխում.

1. Ներկայացվել են ռեֆլեքսիվ կոմպետենցիայի ձևավորման և զարգացման տեխնոլոգիաները, մեթոդները, հնարները, ձևերը, ռեֆլեքսիվ թղթապանակը կամ պորտֆոլիոն, նրա կիրառման գործիքակազմը:

2. Վերլուծվել են Ա. Վ. Կարպովի ռեֆլեքսիվության արտահայտվածության տեսությունը, Օ. Վ. Կալաշնիկովայի մանկավարժական ռեֆլեքսիայի ձևավորվածության մակարդակի որոշման մեթոդիկան, Մ. Գրանտի ռեֆլեքսիայի արտահայտվածության և ուղղվածության մակարդակի

մեթոդիկան, Օ. Ս. Անիսիմովի մանկավարժական ռեֆլեքսիայի ձևավորվածության մակարդակի որոշման մեթոդիկան: Հեղինակը մանրամասն և հիմնավոր նկարագրել է հաստատող գիտափորձի ընթացքը:

Հետազոտողը հաստատում է այն ենթադրությունը, որ արդի դպրոցում առկա են բոլոր հիմնական նախադրյալներն ուսուցչի մասնագիտական ռեֆլեքսիվ կոմպետենտության զարգացման համար: Սկզբունքային նշանակություն է տվել ուսուցիչներին նոր հասկացություններին /ռեֆլեքսիվ միջավայր, ռեֆլեքսիվ թղթապանակ, ռեֆլեքսիվ կոմպետենցիա, ռեֆլեքսիվ օրագիր, ռեֆլեքսիվ պրակտիկում և այլն/ ծանոթացնելը:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է աշխատանքի բովանդակությանը, արտացոլում է նրա հիմնական դրույթները:

Արժևորելով ատենախոսի կողմից կատարած գիտական աշխատանքը, նրա կարևորությունն ու տեսագործնական արժեքը, հարկ ենք համարում ներկայացնել մի քանի նկատառում.

Աշխատանքը կշահեր, եթե

1. ռեֆլեքսիվ միջավայրի առանձնահատկությունները բացահայտելիս համեմատություն կատարվեր գյուղական և քաղաքային դպրոցների միջև,
2. նշվեր, թե տվյալ դպրոցը քանի ուսուցիչ և աշակերտ ունի (հնարավոր է, որ մասնագիտական ռեֆլեքսիան ավելի արագ է զարգանում ուսուցիչների ավելի մեծ քանակ ունեցող դպրոցում),
3. ատենախոսը ցույց տար, թե ինչ մեթոդաբանությամբ է ընտրել ուսուցչի ռեֆլեքսիայի մակարդակի որոշման այս կամ այն մեթոդիկան,
4. առաջադրված մոդելում առանձնացվեր հիմնական ռազմավարությունները,
5. աշխատանքում չլինեին լեզվական և տեխնիկական վրիպակներ:

Վերոնշյալ նկատառումները չեն ազդում ատենախոսության արժեքի վրա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության թեմայի արդիականությունը, նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, ինչպես նաև ստացված արդյունքների հավաստիությունն ու հետևությունների հիմնավորումը թույլ են տալիս եզրակացնել, որ Նարինե Ռաֆիկի

Մատինյանի «Ուսուցչի մասնագիտական ռեֆլեքսիվ հմտությունների զարգացման ուղիները շարունակական կրթության համատեքստում» թեմայով ատենախոսությունը ավարտուն, ինքնուրույն աշխատանք է, համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԺԳ 00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտական թվանիշին, իսկ ատենախոսն արժանի է հայցվող գիտական աստիճանի շնորհման:

Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ,
Մ. գ. թ., դոցենտ՝ _____ Լ. Գ. Բաղդասարյան

Լ. Գ. Բաղդասարյանի ստորագրությունը հաստատում եմ
ՎՊՀ-ի գիտքարտուղար,
Մ. գ. թ., դոցենտ՝ _____ Ս. Ս. Բեժանյան